

---

## ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԵՐՈ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

### ԱՐԵՎԻԿ ՏԵՓՈՅԱՆ

Ժամանակակից տնտեսությունը ամենօրյա բազմաթիվ գործարքների ամբողջություն է, որն իրականացվում է վճարումների և տնտեսավարող սուբյեկտների միջև հաշվարկների միջոցով: Այդ վճարումների և հաշվարկների իրականացման ձևերը, գործող կարգավորումները և կատարման տեխնիկական միջոցները բնութագրում են երկրի վճարահաշվարկային համակարգը, որը կազմված է վճարային գործիքների համախմբից, բանկային գործընթացներից և միջոցների փոխանցման համակարգերից: Վճարահաշվարկային արդյունավետ համակարգը յուրաքանչյուր ազգային տնտեսության կարևորագույն բաղադրիչներից է, զարգացման ցուցիչներից մեկը:

ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացումը երկար տարիների պատմություն ունի: 1996 թ. գործարկվել է CBANet միջբանկային համակարգչային ցանցը<sup>1</sup>, հաշվեհամարների կողավորման նոր համակարգով, իսկ 1997 թ.՝ Էլեկտրոնային վճարումների համակարգը: Տասներկու բանկեր, այդ թվում՝ ԿԲ-ն, միացել են SWIFT համակարգին: 1999 թ. գործարկվել է «Գանձապետական պահառու» համակարգը, որը հնարավորություն է ընձեռում ներդրողներին պատկանող գանձապետական պարտատուսերն առանց միջնորդների վաճառել, հաշվառել և սպասարկել: Այդ գործառնությունները իրականացնում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հատուկ կառուցվածքային ստորաբաժանումը<sup>2</sup>: 2000 թ. ստեղծվել են ԱրՔա քարտերով վճարումների, ինչպես նաև պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման (ՊԱՀՀՀ) ավտոմատացված համակարգերը: Ներկայումս «Արմենիան Քարդ» ընկերությունը MasterCard Europe միջազգային վճարային համակարգի լիիրավ անդամ է և VISA ու American Express համակարգերի համար պրոցեսինգային ծառայություններ մատուցող կենտրոն<sup>3</sup>: 2004 թ. ընդունվել է «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը: 2008 թ.-ից ՀՀ ֆոնդային բորսայում սկսվել են պետական (գանձապետական) և ՀՀ ԿԲ պարտա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Բ. Ասատրյան**, Բանկային գործ, 2004, էջ 247:

<sup>2</sup> Տե՛ս «Վճարահաշվարկային և արժեթղթերի համակարգերը ՀՀ-ում», ՀՀ կենտրոնական բանկ, 2010, էջ 96:

<sup>3</sup> Տե՛ս **Բ. Ասատրյան**, նշվ. աշխ., էջ 251:

տումներով գործարքների կնքումը և քլիրինգի ու վերջնահաշվարկի իրականացումը, մշակվել է արժեթղթերի հաշվարկային համակարգի մասին Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կանոնակարգը:

ՀՀ վճարահաշվարկային համակարգի մասնակիցներն են բանկերը և այլ ֆինանսական կազմակերպություններ: Դրանց գործունեությունը կարգավորվում է «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով: Հայաստանում վճարահաշվարկային կազմակերպությունները կարող են ստանալ երկու տեսակի լիցենզիա՝ դրամական փոխանցումների իրականացման և վճարային գործիքների ու վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի ու քլիրինգի իրականացման<sup>4</sup>: Միջազգային դրամական փոխանցումները ՀՀ բանկերը իրականացնում են հիմնականում SWIFT հեռահաղորդակցման համակարգով՝ արտասահմանյան բանկերում ունեցած թղթակցային հաշիվներով: Տնտեսավարող սուբյեկտները միջազգային փոխանցումներ կատարում են բանկային փոխանցումների միջոցով, իսկ ֆիզիկական անձինք՝ առանց հաշվի բացման դրամական փոխանցումների համակարգերի միջոցով:

ՀՀ կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերը մի քանիսն են՝ համախառն թղթային վճարումների, համախառն էլեկտրոնային վճարումների, պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ: Վերջնահաշվարկներն իրականացվում են ՀՀ կենտրոնական բանկի «Գործառնական օր» ծրագրային համակարգում<sup>5</sup>: ՀՀ բանկերի միջև վճարային փաստաթղթերի վերաբերյալ հաղորդագրությունների փոխանակումը տեղի է ունենում BankMail էլեկտրոնային վճարումների համակարգով: BankMail սերվերը տեղադրված է ԿԲ-ում, իսկ առևտրային բանկում գործում է BankMail աշխատանքային կայան՝ այլ բանկերի հետ վճարային հաղորդագրությունների փոխանակումն ապահովելու համար:

ՀՀ վճարահաշվարկային համակարգի կարևոր խնդիրներից մեկն այն է, որ կանխիկ վճարումներով գործառնությունները ունեն բավականին բարձր տեսակարար կշիռ: Ինչ վերաբերում է անկանխիկ հաշվարկներին, ապա դրանք կարող են իրականացվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված ձևերով, այն է՝ վճարման հանձնարարականներով, չեկերով, վճարային քարտերով, ակրեդիտիվով, ինկասո հաշվարկներով, ինչպես նաև օրենքով նախատեսված ու դրան համապատասխան բանկային կանոններով: Դրանք նույնպես կատարվում են բանկերի միջոցով: ՀՀ-ում թողարկվող չեկերը մշակվում են ձեռքով. միկրոկոդավորում չի կիրառվում, ինչը պայմանավորված է դրանց փոքր քանա-

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ օրենքը «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին»: Ընդունված է 2004 թվականի նոյեմբերի 24-ին, հոդված 19:

<sup>5</sup> Տե՛ս «Վճարահաշվարկային և արժեթղթերի համակարգերը ՀՀ-ում», ՀՀ կենտրոնական բանկ, 2010, էջ 66:

կով և ծավալով: ՀՀ տարածքում ճանապարհային չեկերն առևտրի և սպասարկման կետերում որպես վճարամիջոց չեն ընդունվում, և, որպես կանոն, դրանք կարող են կանխիկացվել միայն բանկերում:


Ներկայումս որոշ առևտրային բանկեր իրենց հաճախորդներին մատուցում են «բանկ-հաճախորդ» հեռահաղորդակցման համակարգերի և «ինտերնետ-բանկինգ» ծառայություններ: Այս դեպքում հաճախորդը հնարավորություն է ստանում իր բանկին կարգադրություններ անելու՝ առանց բանկ այցելելու:

Հայաստանում վճարումների գերակշիռ մասը կատարվում է էլեկտրոնային վճարային հանձնարարականներով: Դա հաճախորդի հանձնարարությունն է բանկին՝ իր հաշվից փոխանցում կատարել շահառուին: Մա պայմանավորված է նրանով, որ վճարային հանձնարարականները ավանդաբար կիրառվող վճարային գործիքներն են, իսկ իրավական դաշտը լրիվ կանոնակարգված է: Վճարման հանձնարարականներով վճարումները բանկերի հաճախորդները կատարում են թղթային եղանակով, իսկ վերջին տարիներին զգալիորեն աճել է նաև հեռահաղորդակցման համակարգերի միջոցով հանձնարարականներ ներկայացնելու պրակտիկան:

Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ 2010 թ. համեմատ 2018 թ. էլեկտրոնային վճարային հանձնարարականներով վճարումների ծավալը աճել է շուրջ 2,3 անգամ՝ կազմելով 23,6 տրիլիոն դրամ: 2014 թ. էլեկտրոնային վճարային հանձնարարականներով վճարումների ծավալը կտրուկ աճել է՝ 18,3 տրիլիոն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 51,2 %-ով (տե՛ս գծ. 1): Չեկերով և այլ եղանակներով վճարումների ծավալը փոքր է:

*Գծապատկեր 1*

**Էլեկտրոնային վճարային հանձնարարականներով վճարումների դինամիկան 2010-2018 թթ. (տրիլիոն դրամ)<sup>6</sup>**




<sup>6</sup> Տե՛ս <https://www.cba.am/am/SitePages/psstatisticaldatareports.aspx>

ՀՀ բանկերի միջև փոխանցումները հիմնականում իրականացվում են էլեկտրոնային եղանակով՝ ՀՀ ԿԲ համակարգերով: Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ ԿԲ էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացվող գործարքների ծավալը վերջին տարիներին կրկնապատկվել է: Այսպես, եթե 2010-2012 թթ. այս ցուցանիշը կազմում էր 7 տրլն դրամից ավելի, ապա 2018 թ. դրությամբ՝ 15,3 տրլն դրամ (տե՛ս գծ. 2): Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգով փոխանցումների ծավալը իր առավելագույն մակարդակին հասել է 2016 թ. կազմելով 3,1 տրլն դրամ, իսկ վերջին տարիներին անկում է ապրել:

**Գծապատկեր 2**


**ՀՀ ԿԲ էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացվող գործարքների ծավալի դինամիկան 2010-2018 թթ. (տրիլիոն դրամ)<sup>7</sup>**



2010-2018 թթ. աճել է քարտերով կատարվող վճարումների ծավալը: Այսպես, եթե 2010 թ. ՀՀ տարածքում քարտերով վճարումները կազմում էին ընդամենը 0,56 տրիլիոն դրամ, ապա 2018 թ. նույն ցուցանիշը կազմում է երեք անգամ ավելի՝ 1,86 տրիլիոն դրամ (տե՛ս գծ. 3):

**Գծապատկեր 3**

**Քարտերով կատարված վճարումների ծավալը 2010-2018 թթ. (տրիլիոն դրամ)<sup>8</sup>**




<sup>7</sup> Տե՛ս <https://www.cba.am/am/SitePages/psstatisticaldataareports.aspx>

<sup>8</sup> Տե՛ս <https://www.cba.am/am/SitePages/psstatisticaldataareports.aspx>

2018 թ. վերջի դրությամբ ՀՀ-ում վճարային քարտերի քանակը գերազանցում է երկու միլիոնը, ընդ որում՝ դրանց 31,1 % ԱրՔա քարտեր են, 39,8 %-ը՝ Վիզա, 27 %-ը՝ Մաստերքարտ: Քարտերի քանակը ևս 2010 թ. համեմատությամբ աճել է 3,3 անգամ (տե՛ս գծ. 4):

**Գծապատկեր 4**


**Շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը<sup>9</sup>**



ՀՀ-ում առկա է վճարային քարտերի սպասարկման բավական զարգացած ենթակառուցվածք: Վերջին տարիներին ՀՀ-ում նկատվում է ԱԳՄ-ների և ՊՈՍ տերմինալների թվաքանակի զգալի աճ: Առավել առաջանցիկ են ՊՈՍ տերմինալները՝ 2018 թ. դրությամբ հասնելով մոտ 8,8 հազարի՝ 2010 թ. 3,3 հազար հատի համեմատ աճելով ավելի քան երեք անգամ: 2015 թ. Հայաստանում արժույթային ճգնաժամը և տնտեսության ոչ բարենպաստ վիճակը բացասաբար են անդրադարձել նաև ՊՈՍ տերմինալների թվաքանակի վրա՝ կրճատելով 7,8 %-ով: Հետագա տարիներին, սակայն, դրանք աճել են (տե՛ս գծ. 5):

**Գծապատկեր 5**

**ԱԳՄ-ների և ՊՈՍ տերմինալների թվաքանակի դինամիկան 2010-2018 թթ. (հատ)**



<sup>9</sup> Տե՛ս <https://www.cba.am/am/SitePages/psstatisticaldatareports.aspx>

Վերջին տարիներին ՀՀ վճարահաշվարկային համակարգում գործունեություն են ծավալում տարբեր կազմակերպություններ՝ Թեյ-Մեյ, Իզի Փեյ, Իդրամ, Մոբիդրամ և այլն: Այս ընկերությունները մատուցում են վճարահաշվարկային ծառայություններ, ստեղծում են արդի տեխնոլոգիական վճարային գործիքներ, իրականացնում վճարային գործիքների սպասարկում և այլն: Այս համակարգերի միջոցով հնարավոր է դառնում տերմինալներով, բջջային հեռախոսով կամ առցանց կատարել զանազան վճարային գործառնություններ՝ կոմունալ ծառայություններ, բաժանորդավճարներ, վարկային պարտավորություններ, ապահովագրավճարներ, պետվճարներ, արագ դրամական փոխանցումներ և այլն: Այս ընկերությունների մի մասն ունի տերմինալների բավականին զարգացած ցանց, որն ընդգրկում է ինչպես Երևան քաղաքը, այնպես էլ մարզերը (օրինակ՝ Թեյ-Մեյ ընկերությունը ունի 1800-ից ավելի, իսկ Իզի Փեյը՝ 1400-ից ավելի տերմինալներ)<sup>10</sup>: Տերմինալները հաճախորդներին սպասարկում են 24/7 ռեժիմով: Նշված վճարային համակարգերին կապված են տարբեր ոլորտների կազմակերպություններ՝ պետական հաստատություններ, բջջային օպերատորներ, առևտրի կետեր, ինչպես նաև ֆինանսական կազմակերպություններ՝ բանկեր, վարկային, ապահովագրական ընկերություններ:

Նշված բոլոր ընկերություններն էլ ունեն բջջային հավելվածներ կամ էլեկտրոնային դրամապանակներ, որոնցով օգտատերը կարող է բջջային հեռախոսի միջոցով օգտվել ընկերության վճարահաշվարկային ծառայություններից՝ ապահովելով արագություն և հարմարավետություն: Բացի վճարային գործառնություններից՝ բջջային հավելվածներով կարելի է կատարել նաև դրամական փոխանցումներ՝ ժամանակի իրական ռեժիմում ցանկացած վայրից, ինչպես նաև կատարել գնումներ:

Վերը նշված ընկերությունները ՀՀ կենտրոնական բանկից ստացել են էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն, որի շնորհիվ տարածվում և խրախուսվում է էլեկտրոնային փողի օգտագործումը Հայաստանում՝ նպաստելով էլեկտրոնային առևտրի զարգացմանը, հաճախորդներին հնարավորություն է ընձեռվում առցանց ռեժիմով կատարելու բազմատեսակ վճարումներ, և կատարելագործվում են դրամական փոխանցումների հնարավորությունները:

Հայաստանում նկատվող մեկ այլ միտում է բջջային կապի օպերատորների կողմից սեփական վճարային համակարգերի ստեղծումը: Օրինակ՝ Վիվասել ՄՏՍ-ը ստեղծել է «Մոբիդրամ», Յուքոմը՝ «Յուփեյ» համակարգերը, որոնք ունեն ՀՀ ԿԲ խորհրդի կողմից տրված Վճարահաշվարկային կազմակերպության դրամական (փողային) փոխանցումներ իրականացնելու լիցենզիա:

---

<sup>10</sup> Տե՛ս banks.am.

Հայաստանի վճարահաշվարկային համակարգը, այսպիսով, ունի բավական զարգացած ենթակառուցվածքներ, սակայն առկա են նաև որոշակի բացթողումներ: Հայաստանը դեռևս կցված չէ աշխարհի խոշորագույն վճարային համակարգերից մեկին՝ Փեյփալին: Ներկայումս Փեյփալ էլեկտրոնային վճարային համակարգը թույլ է տալիս Հայաստանից վճարումներ կատարել, սակայն չի սպասարկում վճարների ստացումը, քանի որ Հայաստանի առցանց ֆինանսական համակարգը համարում է ոչ վստահելի: Առաջիկայում սա պետք է լինի ՀՀ վճարահաշվարկային համակարգի բարելավման կարևոր խնդիրներից մեկը, այսինքն՝ որ Փեյփալ ընկերության միջոցով հնարավոր լինի իրականացնել ոչ միայն գումարներ, այլ նաև վաճառք: Կարծում եմ, որ ՀՀ բանկերն իրենք կարող են ստանձնել միջնորդի դեր Փեյփալի և ՀՀ օգտատերերի միջև:

Տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացումը էապես ազդում է նաև վճարահաշվարկային համակարգերի վրա: Այս տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս մեծացնելու կատարվող գործառնությունների անվտանգությունը, միաժամանակ առաջանում են նաև ռիսկեր՝ կապված վիրտուալ հանցագործությունների թվի աճի հետ: Ներկայումս ՀՀ բանկերը աշխատանքներ են տանում՝ զարգացնելու հետևյալ վճարահաշվարկային գործառնությունները՝

- հեռակա բանկային ծառայությունների մատուցում (E-Banking, E-Card Banking, Mobile-Banking, SMS-Banking, Bank-Client),
- անդամակցում դրամական փոխանցումների համակարգերի,
- անդամակցություն միջազգային վճարային համակարգի, վճարային քարտերով իրականացվող նոր գործառնությունների ներդրում,
- նոր տեսակի վճարային քարտերի թողարկում/սպասարկում,
- չիպային քարտերի թողարկում/սպասարկում,
- սեփական պրոցեսինգային կենտրոնի ստեղծում,
- On-line ռեժիմով և ավտոմատ գանձման մեքենաներով բաժանորդավճարների ընդունում,
- չեկերի, ակրեդիտիվների և միջազգային վճարամիջոցների այլ ձևերի սպասարկում,
- արտարժույթի ավտոմատ փոխանակման սարքերի (ԱԱՓՍ) տեղադրում,
- կանխիկի մուտքագրման Cash-in ավտոմատ մեքենաների տեղադրում:

Հայկական «Արմենիան Քարդ» ընկերությունը դեռևս 2013 թ. ներդրել է էլեկտրոնային առևտրի նոր համակարգ, որն ունի մի շարք կարևոր առավելություններ<sup>11</sup>:

- Նախկինում վիրտուալ քարտով վճարում հնարավոր էր իրա-

<sup>11</sup> Տե՛ս [arca.am](http://arca.am).

կանացնել միայն այդ քարտերի սպասարկման հնարավորություն ունեցող կետերում և միայն նախապես գրանցելով այդպիսի քարտ, սակայն այժմ դրա համար որևէ լրացուցիչ գրանցման կարիք չկա:

- Նոր համակարգը հնարավորություն է տալիս վճարումներ կատարելու՝ մուտքագրելով անմիջապես իրական քարտերի տվյալները:

- Համակարգը կիրառում է միջազգային 3D Secure ստանդարտը, որի առանձնահատկությունն այն է, որ առցանց գործարքներ կատարելիս քարտապանները ուղղորդվում են քարտը թողարկած բանկի կայքը: Այնուհետ քարտի տիրոջն առաջարկվում է մուտքագրել ծածկագիրը: Այս գործընթացը հնարավորություն է տալիս զգալիորեն նվազեցնելու խարդախությունները<sup>12</sup>:

- Համակարգը տրամադրում է մի շարք նոր հնարավորություններ, հատկապես բջջային հավելվածների մասով, որոնք պահանջված են շուկայում:

Ներկայումս վճարահաշվարկային հարաբերությունների առումով հեղափոխական մեծ նշանակություն կարող են ունենալ բոլորչեյն տեխնոլոգիաները, մասնավորապես բիթքոյնը: Ի տարբերություն մյուս արժույթների՝ բիթքոյնը կախված չէ արժույթի թողարկմամբ զբաղվող որևէ կառույցից: Ձեռք բերված վիրտուալ դրամը պահպանվում է համակարգչային «դրամապանակում»: Հատուկ հասցեի կիրառմամբ՝ բիթքոյն կարող է ուղարկվել ցանցի ցանկացած օգտատիրոջ: Այս համակարգից օգտվելիս պարզապես անհնար է օգտագործել այլ անձանց դրամական միջոցները կամ սեփական միջոցներն օգտագործել մեկից ավելի անգամ: Անվտանգության ապահովման համար կիրառվում են գաղտնագրային հատուկ մեթոդներ: Բիթքոյնը ենթադրում է դրամական միջոցների անանուն տնօրինում և ակնթարթային փոխանցում:

Ամփոփելով կարող ենք ասել, որ ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման նպատակով պետք է շարունակվեն վճարային համակարգերի, վճարային գործիքների, ինչպես նաև անկանխիկ վճարումների զարգացման և իրավական դաշտի կարգավորման հետ կապված աշխատանքները, կատարելագործվեն ՀՀ տարածքում օգտագործվող վճարային գործիքները: Հաշվի առնելով ՀՀ-ում կանխիկ շրջանառության մեծ ծավալները՝ առանձնակի ուշադրություն պետք է դարձնել անկանխիկ եղանակով վճարումների իրականացման խոչընդոտների բացահայտմանը և դրանց նվազեցմանը: ՀՀ-ում կանխիկ վճարումների բաժինը նվազեցնելու, ինչպես նաև բնակչությանը բանկային համակարգ ներգրավելու նպատակով անհրաժեշտ է շարունակել բանկերի կողմից մատուցվող վճարային ծառայությունների ընդլայնումը՝ մեծացնելով այն գործիքների ցանկը, որոնք կարող են կիրառվել ՀՀ տարածքում իրականացվող ներքին վճարումներում: Տեղեկատվական

---

<sup>12</sup> Տե՛ս <https://www.securepay.com.au/developers/products-and-services/3d-secure/>.



տեխնոլոգիաների զարգացմանը և համացանցի տարածվածության աճին զուգահեռ՝ մեծ ուշադրություն պետք է դարձնել ինտերնետ ծառայությունների անվտանգությանը՝ համակարգի բնականոն աշխատանքը ապահովելու նպատակով:

**Բանալի բառեր** – *վճարահաշվարկային համակարգ, էլեկտրոնային փող, վճարային հանձնարարական, ինտերնետ-բանկինգ, մոբայլ-բանկինգ, վճարային քարտ*

**АРЕВИК ТЕПОЯН – Роль платёжно-расчётной системы в экономике РА.** – В статье анализируется место платёжно-расчётной системы в экономике, реальное состояние этой системы в Армении, а также пути её развития. Представлены основные платёжные инструменты, используемые в стране, проанализированы основные количественные характеристики названной системы. Проведён сравнительный анализ услуг, предоставляемых её участниками.

**Ключевые слова:** *платежная система, электронные деньги, платежное поручение, интернет-банкинг, мобильный банкинг, платежная карта*

**AREVIK TEPOYAN – The Role of Payment System in the Economy of RA.** – The article is devoted to the analysis of the role of the payment system in the Economy, the analysis of the current situation of the payment system in RA and the ways of its development. The main payment instruments used in RA are presented, and the main quantitative characteristics of the payment system of the RA have been analyzed. Comparative analysis of the services and their characteristics, provided by participants of the RA payment system, has been made.

**Key words:** *payment system, Electronic money, Payment order, Internet-banking, Mobile-banking, payment card*

Ներկայացվել է՝ 03.06.2019

Գրախոսվել է՝ 26.06.2019

Ընդունվել է տպագրության՝ 22.07.2019